Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Տավուշի մարզի Հաղթանակի միջն. դպրոց

Թեմա՝Ուսուցիչների համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ կրթության կազմակերպման և դաստիարակության հարցերում

Վերապատրաստող, մենթոր՝ Մայրանուշ Մկրտումյան

Ուսուցիչ՝ Անուշ Վարդանյան

Երևան2023

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է՝

1. Պարզաբանել, թե ինչ է ծնողավարությունը
2. ՈՒսումնասիրել ոչ արդյունավետ ծնողական հարաբերությունների պատճառները
3. ՈՒսումնասիրել երեխա-ծնող, մասնագետ-ծնող փոխհարաբերություններում հաճախակի կիրառվող մեթոդները
4. ՈՒսումնասիրել սովորողի ծնողի իրավունքներն ու պարտականությունները
5. ՈՒսումնասիրել ծնողների ներգրավվածության խոչընդոտները
6. Բացահայտել, թե ինչպես պետք է հաղորդակցվել սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ

Բովանդակություն

1. Ներածություն……էջ 3
2. Ծնողավարություն……էջ 4
3. Ոչ արդյունավետ ծնողական հարաբերությունների պատճառները……էջ 5
4. Կիրառվող մեթոդներ……էջ 6
5. Սովորաղի ծնողի իրավունքներն ու պարտականությունները……էջ 9
6. Ծնողների ներգրավվածության խոչընդոտները……էջ 11
7. Ներկայությունից դեպի ներգրավվածություն……էջ 12
8. Ինչպես պետք է հաղորդակցվել ծնողների հետ……էջ 13
9. Խորհրդատվություն ծնողներին ……էջ 15
10. Ինչպես եմ ես անցկացնում ծնողական ժողովները……էջ 17
11. Եզրակացություն……էջ 21
12. Օգտագործված գրականություն……էջ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ընտանիքում արմատներ են գցվում, որոնցից հետո աճում են ճյուղեր, ծաղիկներ և պտուղներ. . .»

Վ. Ա. Սուխոմլինսկի

Բոլորիս է հայտնի, որ տարիներ շարունակ երեխայի կրթության ու դաստիարակության գործում առաջնային ու կարևոր դերը տրվում էր ուսուցչին և ուսումնական հաստատությանը՝ անտեսելով ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դերն ու մասնակցությունն այդ գործում: Այժմ երեխայի հետ փոխգործակցության լավագույն մոդելն ուղղված է անձին ու անհատականությանը: Իսկ անհատականությունը, ինչպես գիտենք, ձևավորվում է ընտանիքում, քանի որ հենց ընտանեկան միջավայրում է երեխան անցկացնում իր օրվա գերակշիռ մասը: Ոչ մեկիս համար նորություն չէ հետևյալ խորիմաստ արտահայտությունը՝ երեխան ընտանիքի հայելին է: Նրա ձևավորման գործում մեծ դեր են խաղում թե՝ ժառանգականությունը, թե դաստիարակությունն ու ընտանիքի վառ օրինակը, ծնողների ազդեցությունը: Սակայն սա չի նշանակում, որ ուսուցիչն ու ուսումնական հաստատությունը չեն կարող ունենալ իրենց ազդեցությունը աշակերտի անձի ձևավորման գործում: Ծնողի ցանած սերմերը կարող են և՛ արմատախիլ լինել դպրոցական միջավայրում, և՛ բողբոջել ու ծլարձակել, նայած, թե ինչպիսին են դրանք:Հենց այս պատճառով պետք է սերտ կապ ու համագործակցություն լինի ուսուցիչների և ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) միջև: Այդ համագործակցությունն օր օրի դառնում է ավելի պահանջված ու արդիական: Դա նպատակաուղղված, երկարատև ու համառ աշխատանք է, որն իրականացվում է՝ հաշվի առնելով մարդկային բարձր հատկանիշներն ու որակները և, անշուշտ, էթիկայի նորմերը: Այստեղ տեղին է շարունակել ռուս մեծ ուսուցիչ Սուխոմլինսկու միտքը <<... Դպրոցի մանկավարժական իմաստությունը կառուցված է ընտանիքի բարոյական առողջության վրա>>:

ԾՆՈՂԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծնողավարությունը սոցիալ-հոգեբանական երևույթ է, որն իրենից ներկայացնում է սեփական անձը որպես ծնող ընկալելու պատկերացումների և համոզմունքների համակարգ՝ հուզական և իմացական երանգավորմամբ և դրսևորվում է ծնողավարությունն իրականացնող բոլոր վարքային էպիզոդներում։

Ծնողավարությունն իր մեջ ներառում է

- ընտանեկան արժեքներ (ամուսինների արժեքային կողմնորոշում)
- ծնողական դիրքորոշում և սպասումներ
- ծնողական հարաբերություններ
- ծնողական զգացմունքներ
- ծնողական դերեր
- ծնողական պատասխանատվություն
- ընտանեկան դաստիարակության ոճ

Ծնողավարությունը վառ և ցայտուն կերպով դրսևորվում է նաև դպրոցական իրավիճակներում և միջավայրում, որտեղ երեխայի անձի ձևավորման, ինչպես նաև երեխա-ծնող, ուսուցիչ-ծնող առողջ փոխհարաբերությունների ստեղծման համար շատ կարևոր են և՛ ընտանեկան արժեքներն ու դաստիարակության ոճը, և՛ ծնողների միջև հարաբերությունները, նրանց դերերն ընտանիքում, զգացմունքներն ու պատասխանատվությունը, նրանց դիրքորոշումն ու սպասումները:

ՈՉ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

«Բոլոր երջանիկ ընտանիքները նման են իրար, յուրաքանչյուր դժբախտ ընտանիք դժբախտ է յուրովի»:

Լ. Ն. Տոլստոյ

Ոչ արդյունավետ ծնողական հարաբերությունների պատճառները բազմազան են: Դրանք եղել են և, ցավոք, մեր օրերում էլ շարունակում են իրենց բացասական հետքը թողնել երեխայի, նրա դաստիարակության և նրա՝ որպես անհատի ձևավորման վրա: Նմանատիպ պատճառներ կարող են հանդիսանալ՝

- ծնողների հոգեբանամանկավարժական գիտելիքների ոչ համապատասխան իմացությունը
- դաստիարակության մեջ կարծրատիպերը
- ծնողների անձնային խնդիրներն ու առանձնահատկությունները, որոնք տեղափոխվում են երեխայի հետ փոխհարաբերությունների դաշտ
- ընտանիքում երեխայի հանդեպ շփման առանձնահատկությունները

Խանգարող և ռիսկային հանգամանքներ կարող են լինել նաև ծնողների գերհոգատարությունը կամ թերհոգատարությունը երեխայի հանդեպ, նրանց հուզական օտարվածությունը երեխայից, չափազանց բարոյական և հոգեբանական պատասխանատվությունը, ինչպես նաև հակասական դաստիարակությունը:

Մեր կյանքի և երկարամյա աշխատանքային փորձի ընթացքում բազմիցս առնչվել ենք վերոհիշյալ խնդիրներին: Շատ հաճախ զույգը ֆիզիկապես և կենսաբանորեն ծնող է դառնում՝ առանց գիտակցելու այդ կարգավիճակի լրջությունն ու մեծ պատասխանատվությունը: Այստեղ շատ կարևոր է ուսումնական հաստատության և ուսուցչի դերը: Ծնողների հետ աշխատանքի իրականացման համար նախատեսվում է երկու ճանապարհ.

1.Աշխատանք՝ ուղղված ծնողների հոգեբանական վիճակի կայունացմանը և բարելավմանը:

2. Աշխատանք՝ ուղղված ծնողների միջոցով երեխայի հոգեբանական խնդիրների հաղթահարմանը:

Չէ՞ որ դպրոցական հին աֆորիզմն ասում է. 《Երեխաների հետ աշխատելու գործում ամենադժվարը նրանց ծնողների հետ աշխատելն է》:

ԵՐԵԽԱ_ԾՆՈՂ, ՄԱՍՆԱԳԵՏ_ԾՆՈՂ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՃԱԽԱԿԻ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐ

《Կրթության մեջ ամենակարևորը երեխայի հոգեկան ակտիվությունն է, որով նա ճանաչում է իր ներաշխարհը, կարողանում է հաստատել իր ներքին հոգեկան արժանապատվությունը և ազատությունը》

Կ. Դ. Ուշինսկի

Երեխա_ծնող, մասնագետ _ծնող փոխհարաբերություններում հաճախակի կիրառվող մեթոդներից ամենաարդյունավետը կարելի է համարել 《Ե՛վ ինձ, և՛ քեզ》 մեթոդը, քանի որ

- փոխհարաբերությունները կառուցվում են ոչ ուժային պայմաններում
- մեթոդը մոտիվացնում է երեխային պրոբլեմային իրավիճակում արագ լուծումներ գտնելուն
- նպաստում է միմյանց հանդեպ վստահության, փոխհամաձայնության և համագործակցության առաջացմանը

- ծնողը, երեխան և մասնագետը համատեղ լուծում են իրենց առջև դրված խնդիրը
- մեթոդն ունի թերապևտիկ ազդեցություն
- չկան լիդերներ, այլ կան երկու իրավահավասար կողմեր

《Ե՛վ ինձ, և՛ քեզ》 մեթոդի կիրառման համար առաջադրվում են հետևյալ հիմնական քայլերը.

1.Որոշակիացնել կոնֆլիկտը։

2.Դուրս բերել այլընտրանքային հնարավոր լուծումներ։

3.Գնահատել այդ լուծումները։

4.Ընտրել ամենահավանականն ու կիրառելին։

5.Ելքեր գտնել այն կյանքի կոչելու։

6.Հետևել և գնահատել՝ ինչպես է աշխատում այդ որոշումն իրական կյանքում։

Ի վերջո շահում է այն աշակերտը, ում ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում։ Այդ աշակերտը հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի։Շահում է այն աշակերտը, ում ծնողը ավելի դրական է տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունի, ցուցաբերում է դրական վարք, դրական հարաբերություններ ունի ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ։Շահում է ուսուցիչը, քանի որ բարձրանում է հարգանքը սեփական մասնագիտության նկատմամբ, բարձրանում է ինքնավստահությունը, բարձրանում է աշխատանքի մոտիվացիան, ստանում է սպառիչ տեղեկություն աշակերտի մասին։ Շահում է դպրոցը. բարձրանում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ։ Դպրոցական ծրագրերը, որոնցում մասնակցում են ծնողները, ավելի հաջողված են, քան այն ծրագրերը, որոնցում ծնողների մասնակցությունը չկա։ Ծնողների ներգրավվածության բարձրացումից հետո բացահայտորեն բարձրանում է աշակերտների հաճախելիությունը։


ՍՈՎՈՐՈՂ
ՄՈՏԻՎԱՑԻԱ
ԱՌԱՋ ՇԱՐԺՎԵԼՈՒ ԴԵՊԻ ԻՐ
ԵՐԱՋԱՆԱՔՆԵՐՆ ՈՒ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՈՒՍՈՒՑԻՉ
ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂ

ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես արդեն նշեցինք, շատ կարևոր է դպրոց_ծնող կապն ու համագործակցությունը՝ սովորողների առաջադիմության, նրանց կրթական կարիքների բացահայտման և բարելավման նպատակով: Եվ որպեսզի ճիշտ, գրագետ ու արդյունավետ իրականացվի այդ համագործակցությունը, պետք է իմանալ սովորողի ծնողի իրավունքներն ու պարտականությունները:

Սովորողի ծնողն իրավունք ունի՝

- երեխայի ուսուցման համար ընտրելու ուսումնական հաստատությունը
- համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով
- մասնակցելու երեխայի անհատական ուսուցման պլանի մշակմանն ու իրականացմանը
- ստանալու անհրաժեշտ խորհրդատվություն երեխայի կրթության կազմակերպման աջակցության ծառայությունների վերաբերյալ
- դիմելու համապատասխան մարմիններին երեխայի զարգացման, ուսուցման և դաստիարակության հարցերով
- պաշտպանելու իր և իր երեխայի օրինական շահերը համապատասխան մարմիններում
- մասնակցելու հանրակրթական ծրագրերի իրականացման և դրանց արդյունավետության գնահատման գործընթացին
- մասնակցելու ուսումնական հաստատության ներքին գնահատմանը
- մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը՝ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով

Սովորողի ծնողն ունի նաև ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ

Սովորողի ծնողը պարտավոր է՝

- երեխայի համար ընտանիքում ապահովել համապատասխան պայմաններ կրթություն ստանալու համար
- մշտապես հոգալ երեխայի ֆիզիկական առողջության և հոգեկան վիճակի մասին, ստեղծել համապատասխան պայմաններ երեխայի հակումների և ընդունակությունների զարգացման, կրթական կարիքների բավարարման համար
- հարգել երեխայի արժանապատվությունը, դաստիարակել աշխատասիրություն, բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, գթասրտություն, հարգալից վերաբերմունք ընտանիքի, մեծահասակների, պետական և մայրենի լեզվի, ժողովրդական ավանդույթների և սովորույթների նկատմամբ
- դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների և հայրենիքի նկատմամբ, հոգատար վերաբերմունք պատմամշակութային հարստության և շրջակա միջավայրի նկատմամբ, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների և մշակույթների նկատմամբ
- դաստիարակել հարգանք ուսումնական հաստատության և մանկավարժական աշխատողների նկատմամբ
- սույն օրենքի 15_րդ և 16_րդ հոդվածներով սահմանված ժամկետներում երեխային բերել ուսումնական հաստատություն
- հատուցել իր, ինչպես նաև իր երեխայի կողմից ուսումնական հաստատությանը հասցված վնասը

ԾՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Ինչպես նշվեց, երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության ցործընթացում և դրական է տրամադրված դպրոցի հանդեպ ու մասնակցում է դպրոցական ծրագրերին, շահում է և՛ սովորողը, և՛ դպրոցը, և՛ ուսուցիչը: Սակայն հաճախ ծնողների ներգրավվածության գործում հանդիպում են մի շարք խոչընդոտներ: Բացահայտելով և ուսումնասիրելով այդ խոչընդոտները՝ կարելի է հարթել դրանք և զուտ ներկայությունից քայլ առ քայլ գնալ դեպի ներգրավվածություն:

Ըստ դպրոցի՝ ծնողների ներգրավվածության խոչընդոտներն են.

- երեխաներին պակաս ժամանակի տրամադրում
- ծնողների ծանրաբեռնվածության գրաֆիկը
- ծնողների անվստահությունը ուսուցիչների նկատմամբ
- ծնողների բացասական վերաբերմունքը ուսուցման նոր մեթոդների նկատմամբ
- ծնողների կողմից դաստիարակության ոչ ճիշտ մեթոդների կիրառում
- ծնողների և աշակերտների կողմից իրավունք/պարտականությունների մասին անտեղյակություն

Ըստ ծնողի՝ ներգրավվածության խոչընդոտներն են.

- դպրոցի կողմից ոչ լրիվ տեղեկատվության հաղորդումը
- ընտրած դասագրքերը ծնողները բացասական են գնահատում
- երբեմն ծնողները գտնում են, որ իրենց դպրոցում սիրով չեն սպասում

Շատ հաճախ ուսուցիչները գտնում են, որ ընտանիքները չեն ցանկանում մասնակցություն ունենալ, այնինչ, իրականում, ընտանիքները չգիտեն ինչպես մասնակցել:

ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկայություն

Ընտանիքները հաճախում են ժողովների,որոնք անցկացնում են ուսուցիչները:

Ընտանիքները ստանում են ԱՈՒՊ-ը և ստորագրում այն:

Առարկայական-Ընտանիքները տեղեկացվում են ընթերցանության ուսումնական ծրագրի և նպատակների մասին:

Մասնակցություն

Ընտանիքը և ուսուցիչը միասին են անցկացնում ժողովը:

Ընտանիքը մասնակցում է ԱՈՒՊ-ի մշակման համար կայացող հանդիպմանը,բայց ունենում է պասիվ դերակատարում:

Ընտանիքը դիտում է,թե ուսուցիչն ինչպես է աշխատում երեխայի հետ:

Ներգրավվածություն

Ընտանիքը (և աշակերտը) անցկացնում են ԱՈՒՊ ժողովը:

Ընտանիքները ակտիվորեն մասնակցում են հանդիպումներին՝ նպատակների սահմանմանը,հանդես են գալիս դիտարկումներով ու ստանում հետադարձ կապ:

Ընտանիքն ուսուցչի հետ քննարկում է այդ նպատակները տանն ամրապնդելու հնարավոր ձևերը:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Ուսուցչի և ծնողների համագործակցության բովանդակությունն իր մեջ երեք հիմնական ուղղություններ է ներառում՝ ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածությունը, նրանց մասնակցությունը ուսումնա_ դաստիարակչական գործընթացին և նրանց մասնակցությունը դպրոցի կառավարմանը։Ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածությունը ենթադրում է ընտանիքների հետ աշխատանքի հետևյալ ձևերի կազմակերպում.

- ծնողական համալսարաններ
- կոնֆերանսներ
- անհատական և թեմատիկ խորհրդատվություններ
- ծնողական ժողովներ
- սեմինարներ

Ծնողներին դասարանի ուսումնադաստիարակչական աշխատանքներին կարելի է ներգրավել՝ կազմակերպելով գործունեության հետևյալ ձևերը.

- երեխաների և ծնողների ստեղծագործության օրեր
- բաց դասեր ու արտադասարանական միջոցառումներ
- մասնակցություն դպրոցի ու դասարանի աշխատանքներին
- ծնողական հսկողության սահմանում դասարանում

Ծնողների մասնակցությունը դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարմանը կարելի է կազմակերպել հետևյալ ձևերով.

- ծնողների մասնակցությունը դպրոցի խորհրդի աշխատանքներին
- ծնողների մասնակցությունը ծնողական խորհրդի աշխատանքներին
- ծնողների մասնակցությունը դպրոցի կազմակերպական աշխատանքներին

Ուսուցիչը մեծ ուշադրություն պետք է դարձնի ծնողների տեղեկացվածությանը, որն օգնում է ծնողների մանկավարժական մտածելակերպի և դաստիարակչական հմտությունների ձևավորմանը: Ծնողների մասնակցության ձևերից մեկը դպրոցի և դասարանի ծնողական խորհրդի գործունեությունն է: Ծնողական խորհրդի անդամներ են դառնում ամենաակտիվ և փորձառու ծնողները: Ծնողական խորհրդի նիստերն անց են կացվում ամիսը մեկ անգամ, սակայն անհրաժեշտության դեպքում կարելի է անցկացնել նաև երկու անգամ: Ծնողների հետ աշխատանքի մի հետաքրքիր և արդյունավետ ձև է նաև ծնողական համալսարանը, որի նպատակն է համալրել ծնողների մանկավարժական և հոգեբանական գիտելիքները, ծանոթացնել նրանց դաստիարակության և մանկավարժության ժամանակակից խնդիրներին: Ծնողական համալսարանում պարապմունքները կարող են անցկացվել զանազան ձևերով՝ կոնֆերանսներ, հարց ու պատասխաններ, դասախոսություններ, սեմինարներ և այլն:

Աշակերտների ընտանիքների հետ հաղորդակցվելիս ուսուցիչը պետք է պահպանի մի շարք կանոններ.

- Ծնողներին պետք է հարգանքով վերաբերվել:
- Ծնողի հետ հաղորդակցումը պետք է լինի ոչ թե ի վնաս, այլ հօգուտ երեխայի:
- Ընտանիքների ուսումնասիրությունը պետք է կատարվի օբյեկտիվորեն:
- Ընտանիքների ուսումնասիրությունը պետք է կազմակերպել ծնողների հետ համագործակցության միջոցով:

Ուսուցիչը սովորողների ընտանիքների մասին պետք է ունենա հետևյալ տեղեկությունները.

- ընդհանուր տեղեկություններ ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների մասին
- ընտանիքի կրթական մակարդակը
- ծնողների հետաքրքրությունը դպրոցի և երեխայի դպրոցական կյանքի նկատմամբ

- ընտանիքի անդամների և երեխայի փոխհարաբերությունները
- ծնողների ազդեցությունը երեխայի վրա
- ընտանեկան ավանդույթներն ու սովորույթները

Ընտանիքների ուսումնասիրությունը ուսուցչին հնարավորություն է տալիս ավելի լավ ճանաչելու երեխային, հասկանալու նրա ընտանեկան դրությունը, ճանաչելու հոգևոր արժեքները, ծնողների և երեխաների փոխհարաբերությունները: Ընտանիքների ուսումնասիրության համար ուսուցիչը կարող է հոգեբանամանկավարժական հայտորոշման տարբեր մեթոդներ կիրառել, ինչպիսիք են զրույցները, թեստերը, հարցաթերթիկները, գործնական և ինտերակտիվ խաղերը, սեմինարները: Գործնական աշխատանքի տարբեր ձևերը հնարավորություն են տալիս ծնողներին պարզելու, թե երեխաների դաստիարակության հարցում ի՞նչն է իրենց հաջողվում, ի՞նչն ուղղելու կարիք ունի և ի՞նչն է թերի մնում: Ցանկացած ծնող պետք է գիտակցի, որ երեխայի դաստիարակության հիմնաքարը դրվում է ընտանիքում: Երբեմն ծնողները հրաժարվում են մասնակցել ծնողական ժողովներին և խուսափում ուսուցչի հետ հանդիպումից: Սակայն պետք չէ զարմանալ, քանի որ հաճախ ծնողական ժողովներն ու հանդիպումները վերածվում են վեճի, որտեղ ոտնահարվում է ծնողի արժանապատվությունը: Ուսուցիչը պետք է գիտակցի և միշտ հիշի, որ ծնողական ժողովի նպատակը դասարանում ծագած խնդիրների քննարկումն ու ծնողների օգնությամբ այդ խնդիրների լուծման ուղիներ գտնելն է:

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Թեմատիկ և անհատական խորհրդատվությունն անց է կացվում ծնողների ցանկությամբ կամ ուսուցչի խորհրդով, եթե ծնողները երեխայի դաստիարակության ընթացքում բախվում են խնդիրների, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն լուծելու կամ խուսափում են դժվար իրավիճակներում որևէ որոշում կայացնելուց: Նմանատիպ խորհրդատվություններին պետք է մանրակրկիտ նախապատրաստվել:

Այդ ընթացքում անհրաժեշտ է զրուցել երեխայի, նրա մտերիմների և մանկավարժների հետ, ընդ որում դա պետք է կատարել շատ զգույշ և խելացի կերպով: Յուրաքանչյուր խորհրդատվություն ենթադրում է ոչ միայն խնդիրների քննարկում, այլ նաև գործնական խորհուրդներ այդ խնդիրների լուծման վերաբերյալ: Միշտ չէ, որ ուսուցիչն ի վիճակի է նմանատիպ խորհրդատվություններ անցկացնել: Ուստի երբեմն հարկ է լինում այդ խնդիրների լուծմանը ներգրավել նաև այլ մասնագետների:

Խորհրդատվությունն անցկացնելիս պետք է իմանալ.

- Խորհրդատվությունն անց է կացվում ծնողների, երեխայի և ուսուցչի խնդրանքով:
- Քննարկվող խնդիրը ուսուցչին պետք է հայտնի լինի, որը նա պարտավոր է ուսումնասիրել տարբեր տեսանկյուններից՝ երեխայի, ծնողների, մանկավարժների:
- Խորհրդատվության ընթացքում անհրաժեշտ է հնարավորություն տալ շահագրգիռ կողմերին՝ արտահայտելու իրենց տեսանկյուններն ու վերաբերմունքը խնդրի վերաբերյալ:
- Խորհրդատվության մասնակիցները, որոնք փորձում են օգնել ծնողներին, պետք է մանրամասն ծանոթ լինեն քննարկվող խնդրին:
- Խորհրդատվությունը պետք է անցնի բարեկամական մթնոլորտում, առանց սպառնալիքների և վիրավորանքների:
- Խորհրդատվության ընթացքում անհրաժեշտ է նախ ներկայացնել երեխայի բոլոր դրական հատկանիշները, ապա նոր միայն խոսել եղած խնդիրների մասին:
- Խորհրդատվության ընթացքում երբեք չի կարելի մի երեխային համեմատել մյուսի հետ, այլ հարկավոր է միայն խոսել նրա նախկին դրական հատկանիշների և հաջողությունների մասին և դրանք համեմատել ներկայիս թերությունների ու դժվարությունների հետ:

- Խորհրդատվության ընթացքում մասնագետները, մանկավարժներն ու ուսուցիչը պետք է ծնողներին գործնական խորհուրդներ տան։

- Խորհրդատվությունը պետք է լինի հեռանկարային և նպաստի ընտանիքում ծագած խնդիրների դրական լուծմանը։
- Խորհրդատվության արդյունքները չպիտի քննարկման առարկա դառնան կողմնակի մարդկանց համար։

ԻՆՉՊԵՍ ԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՆՑԿԱՑՆՈՒՄ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Ծնողների և դպրոցի համագործակցության գլխավոր ձևերից են դասարանական ծնողական ժողովները, որոնք անց են կացվում ուսումնական տարվա ընթացքում։ Դասարանական ծնողական ժողովների ընթացքում քննարկում ենք դասարանի ուսումնադաստիարակչական գործընթացի խնդիրները, պլանավորում և մշակում ենք այդ գործընթացի կազմակերպման ձևերը, որոշում դպրոցի և ծնողների համագործակցության ուղղությունները, ամփոփում ենք տարվա աշխատանքի արդյունքները։ Երեխաների առաջադիմության քննարկումը երբեք չի դառնում իմ ծնողական ժողովների գլխավոր թեման։

Ծնողական ժողովները կարող են լինել՝

- Կազմակերպչական
- թեմատիկ
- համադպրոցան և դասարանական
- ամփոփիչ

Ծնողական ժողովներ անցկացնելը նույնքան դժվար է, որքան դասերն ու արտադասարանական աշխատանքը։ Այստեղ հանդիպում են ուսումնական գործընթացին մասնակցող երկու կողմերը՝ մանկավարժներն ու ծնողները, որպեսզի լսեն միմյանց և քննարկեն երրորդ կողմի՝ սովորողների հիմնական խնդիրները։

Հենց այս պատճառով էլ իմ գործառութային պարտականությունների մեջ առաջին տեղը հատկացվում է ծնողական ժողովներին: Այդ հանգամանքն ինձնից պահանջում է մեծ պատասխանատվությամբ պատրաստվել ծնողական ժողովներին: Ծնողական ժողովների նախապատրաստումը կարելի է բաժանել փուլերի:

ՓՈՒԼ 1.Ծնողական ժողովի նախապատրաստում

Այս փուլն սկսում եմ ժողովի մասնակիցների հաշվառմամբ և օրակարգի հաստատմամբ: Իմ երկարամյա փորձը ցույց է տվել, որ նպատակահարմար է նախապես անցկացնել խորհրդակցություն դասարանում դասավանդող ուսուցիչների հետ: Այդ հանդիպման նպատակը աշակերտների՝ դասի ընթացքում վարքի առանձնահատկությունների և ուսումնական ձեռքբերումների քննարկումն է: Հավաքած տեղեկություններն օգտագործում եմ ուսումնական գործընթացում սովորողների մասնակցության վերլուծության և ամփոփման համար: Հակառակ դեպքում իմ ցանկացած դիտողություն կարող է անհատական բնույթ կրել: Դրա հետ մեկտեղ պարզ է, որ ծնողներին հետաքրքրում են իրենց երեխաների ուսումնական գործընթացի մանրամասն արդյունքները: Այդ պատճառով նախապես պատրաստում եմ յուրաքանչյուր սովորողի առաջադիմության թերթիկը: Ծնողական ժողովների նախապատրաստման ընթացքում կարևոր է նաև ծնողների ներկայության ապահովումը: Ժողովի մասին նախապես եմ տեղեկացնում ծնողներին, պատրաստում եմ երեխաների արտադասարանական կյանքը պատկերող նյութեր և նկարներ, շնորհակալագրեր այն ծնողներին, ում երեխաները մասնակցել են մրցույթներին և օլիմպիադաներին: Նախապատրաստական փուլն ավարտում եմ դասարանի ձևավորմամբ, որտեղ անց է կացվելու ժողովը:

ՓՈՒԼ 2.Ծնողական ժողովի անցկացում

Ցանկացած ժողով իր մեջ ներառում է հետևյալ կարևոր բաղադրիչները.

1.Դասարանի աշակերտների առաջադիմության վերլուծություն Ծնողական ժողովի այս բաժնում ծնողներին ներկայացնում եմ դասարանի ուսումնական գործունեության ընդհանուր արդյունքները:

Նախապես զգուշացնում եմ ծնողներին, որ նրանք իրենց հետաքրքրող մասնավոր հարցերը կարող են տալ միայն անհատական հանդիպման ժամանակ։ Ժողովի մասնակիցներին ներկայացնելով դասարանում դասավանդող ուսուցիչների կարծիքը, հայտնելով նրանց այս կամ այն եզրակացությունը՝ զերծ եմ մնում իմ սուբյեկտիվ կարծիքն ու վերաբերմունքն արտահայտելուց։

2.Դասարանում տիրող սոցիալ_հոգեբանական մթնոլորտի ներկայացում

Ժողովի ժամանակ ներկայացնում եմ տարբեր իրավիճակներում սովորողների վարքի վերաբերյալ իմ դիտարկումները (դասերի ընթացքում, դասամիջոցներին, դպրոցի ճաշարանում, արշավների ժամանակ)։

Քննարկման թեմա են լինում նաև աշակերտների փոխհարաբերությունները, նրանց խոսքը, արտաքին տեսքը։ Ծնողները պետք է հասկանան, որ դպրոցը սոցիալականացման այն ինստիտուտն է, ուր երեխաներն այլ մարդկանց հետ համագործակցելու փորձ են ձեռք բերում, որն ավելի կարևոր է, քան գիտելիքների քանակը։ Այս առումով փորձում եմ լինել խիստ նրբանկատ, խուսափում եմ բացասական գնահատական տալ երեխաներին ու, առավել ևս, նրանց ծնողներին։ Ժողովի այս բաժինը չի կարելի վերածել աշակերտների "մեղքերի" թվարկման ժամի։

3.Հոգեբանամանկավարժական խորհրդատվություն

Ծնողների հոգեբանամանկավարժական մակարդակի բարձրացումը համարում եմ իմ աշխատանքի գլխավոր խնդիրներից մեկը։ Դրա համար ծնողներին ծանոթացնում եմ մանկավարժական գրականության նորություններին, կազմակերպում եմ կլոր սեղաններ, կինոդիտումներ։ 4.Կազմակերպական աշխատանքների քննարկում

Սա բաղկացած է երկու բաղադրիչներից՝ կատարած աշխատանքի հաշվետվություն և տեղեկություն ընթացիկ գործերի վերաբերյալ։ Բոլոր ֆինանսական հարցերը նախապես քննարկում եմ ծնողական խորհրդի հետ։

5.Անհատական զրույց ծնողների հետ

Իմ ուշադրության կենտրոնում այն ծնողներն են, ում երեխաները ուսման և զարգացման որոշ խնդիրներ ունեն։

Նման ծնողները, խուսափելով քննադատությունից, խուսափում են մասնակցել ծնողական ժողովներին։

Փորձում եմ օգնել նրանց հասկանալու, որ այստեղ ոչ թե դատում ենք երեխային, այլ փորձում ամեն կերպ օգնել նրան։

ՓՈՒԼ 3.Ծնողական ժողովի արդյունքների ամփոփում

Արդյունքների ամփոփումն սկսվում է ժողովի ընթացքում։ Անհրաժեշտ է եզրակացություններ անել և համապատասխան որոշումներ կայացնել։ Անհրաժեշտ է ճշտել ծնողների կարծիքն այդ ժողովի վերաբերյալ: Դրա համար նախապես պատրաստում եմ հարցաթերթիկներ ծնողների գնահատականների, առաջարկությունների,հարցերի վերաբերյալ, որոնք հետո պետք է քննարկվեն։ Ծնողական ժողովի արդյունքների մասին տեղյակ եմ պահում տնօրինությանը։

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ծնողական ժողովի թեման ընտրում եմ այնպես, որ ծնողների համար լինի հրատապ և հետաքրքիր։ Ժողովն անց եմ կացնում ծնողների համար հարմար ժամերին։ Ծնողներին նախապես տեղյակ եմ պահում ժողովի օրակարգի մասին։ Ծնողների և իմ շփումն ու հաղորդակցումը լինում է անմիջական՝ էթիկայի կանոնների պահպանմամբ։ Ժողովն սկսում եմ դրական և բարձր տրամադրությամբ, այն տևում է առավելագույնը 90 րոպե։ Սկզբում խոսում եմ դրական հարցերի շուրջ, ապա անցնում խնդիրների քննարկմանը, անում եմ առաջարկություններ հետագա աշխատանքների վերաբերյալ։ Զգուշացնում եմ ծնողներին, որ չի կարելի քննարկված բոլոր հարցերի մասին պատմել երեխաներին։ Երեխաների ձեռքբերումները ներկայացնելիս խոսում եմ նաև նրանց ունեցած հնարավորություններից և ընդունակություններից։ Ծնողների գիտակցությանն եմ հասցնում, որ "վատ" աշակերտ բոլորովին չի նշանանում վատ մարդ։ Երբեք չեմ մոռանում շնորհակալություն հայտնել ծնողներին մասնակցության համար։ Ի վերջո՝ ծնողը պետք է հեռանա ժողովից այն համոզմամբ, որ դպրոցը պատրաստ է աջակցել իրեն՝ օգնելու իր երեխային։

Պետք է միշտ խուսափել նախատել ծնողին մյուսների ներկայությամբ՝ նախորդ ժողովին չներկայանալու համար: Չի կարելի համեմատել մի աշակերտին մյուսի հետ, բացասական գնահատական տալ ողջ դասարանին, խոսել ծնողների հետ բարձր, հրամայական տոնով: Եվ վերջապես, ուսուցիչը պիտի լինի անաչառ, բարյացակամ և ունենա մանկավարժական տակտի մեծ զգացում: Նոր դասարան վերցնելու պարագայում առաջին ժողովը սկսում եմ ծնողների հետ ծանոթությունից. նախ ինքս եմ ներկայանում, ապա հնարավորություն եմ տալիս ներկայանալու ծնողներին: Խոսում եմ դպրոցի հնարավորությունների և խնդիրների մասին, ներկայացնում նրանց այն պլանները, որոնք դրել եմ իմ և դասարանի առջև: Ներկայացնում եմ տվյալ ուսումնական տարում աշակերտներին ներկայացվող հիմնական պահանջներն ու այն վերջնարդյունքները, որոնց պիտի հասնենք միասին: Ժողովի երկրորդ մասում ընտրվում է դասարանի ծնողական խորհուրդ:

Ժողովի մթնոլորտը պետք է համոզի ծնողներին, որ ուսուցչի նպատակը սովորողների և նրանց ծնողների մեկ միասնական ու համերաշխ կոլեկտիվ ստեղծելն է:

<<Սովորական ուսուցիչը պատմում է: Լավ ուսուցիչը բացատրում է: Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս: Հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է: >>

Ուիլյամ Ուորդ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդյունքում եկանք այն համոզման, որ ուսուցչի, սովորողի, ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի համագործակցությունը բավականին պատասխանատու և կարևոր գործընթաց է: Կողմերը պետք է քաջ գիտակցեն, որ իրենց համագործակցության հիմքում սովորողների սովորելու իրավունքի իրականացումն է: Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա, և չի կարելի ստորադասել որևէ կողմի գործառույթները:

Հարկավոր է հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ, որպեսզի կարելի լինի մշտադիտարկել կրթական հնարավոր խնդիրներն ու սովորողների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված վարքային շեղումները, գտնել դրանց լուծման միասնական եղանակները: Սովորողների ծնողների միջև նույնպես անհրաժեշտ է ստեղծել բարոյահոգեբանական առողջ ու կայուն փոխհարաբերություններ: Պետք է ծնողների մեջ վստահություն ներշնչել, որ իրենց զավակը գտնվում է վստահելի ձեռքերում, և կրթության ու դաստիարակության համար ստեղծված են բոլոր պայմանները:

<<Մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակությունը մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը՝ մեր ապագա վիշտը, մեր արտասուքները, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև>>:

Ա. Ս. Մակարենկո

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռ. Մուրադյան <<Դասղեկ>>, <<Գիտություն>> հրատարակչություն, Երևան 2007 28_րդ հոդված փոփոխվ. 01.12.14 20_200_Ն, 06.03.20 20_101_Ն օրենքներ: